Երկրորդ ընթերցում
Լրամշակված նախագիծ

Կ-764[31]-16.01.2024-ՊԻ-011

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՕՐԵՆՔԸ

ՀԱՐԿԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. 2016 թվականի հոկտեմբերի 4-ի Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 236-րդ հոդվածում՝

1) 2-րդ և 3-րդ մասերում հանել «դատական ակտերի» բառերը.

2) 4-րդ մասում «դատական ակտերի հարկադիր կատարման ծառայության» բառերը փոխարինել «Հարկադիր կատարումն ապահովող ծառայության» բառերով:

Հոդված 2. Օրենսգրքի 431-րդ հոդվածը 11-րդ մասից հետո լրացնել հետևյալ խմբագրությամբ 11.1.-ին մասով.

«11.1. Եթե հարկային պարտավորությունների ապահովման՝ գույքի արգելանքի միջոցը սույն օրենսգրքով սահմանված կարգով փոխարինվում է հարկային պարտավորությունների ապահովման այլ միջոցներով, և այդ ապահովման միջոցով ապահովված հարկային պարտավորությունների հարկադիր կատարման նպատակով հարուցված է կատարողական վարույթ, ապա հարկային մարմինն օրենքով սահմանված կարգով միջնորդություն է ներկայացնում այդ կատարողական վարույթն ավարտելու մասին՝ պայմանով, որ հարկ վճարողը նախապես հատուցում է նման միջնորդության հետևանքով ծագող՝ կատարողական վճարների գծով պահանջատիրոջ ծախսերը:»:

Հոդված 3. Օրենսգրքի 437-րդ հոդվածի 4-րդ մասում ««Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» Հանրապետության» բառերը փոխարինել ««Կատարողական վարույթի մասին»» բառերով.

Հոդված 4. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2025 թվականի հուլիսի 1-ից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՕՐԵՆՔԸ

ՀԱՐԿԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ~~ՆԵՐ~~ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. 2016 թվականի հոկտեմբերի 4-ի Հայաստանի Հանրապետության ~~Հայաստանի Հանրապետության 2016 թվականի հոկտեմբերի 4-ի~~ հարկային օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 236-րդ հոդվածում՝

3) 2-րդ և 3-րդ մասերում հանել «դատական ակտերի» բառերը.

4) 4-րդ մասում «դատական ակտերի հարկադիր կատարման ծառայության» բառերը փոխարինել «Հարկադիր կատարումն ապահովող ծառայության» բառերով:

Հոդված 2. Օրենսգրքի 431-րդ հոդվածը 11-րդ մասից հետո լրացնել հետևյալ խմբագրությամբ 11.1.-ին մասով.

«11.1. Եթե հարկային պարտավորությունների ապահովման՝ գույքի արգելանքի միջոցը սույն օրենսգրքով ~~միջոցը սույն օրենքով~~ սահմանված կարգով փոխարինվում է հարկային պարտավորությունների ապահովման այլ միջոցներով, և այդ ապահովման միջոցով ապահովված հարկային պարտավորությունների հարկադիր կատարման նպատակով հարուցված է կատարողական վարույթ, ապա հարկային մարմինն օրենքով սահմանված կարգով միջնորդություն է ներկայացնում այդ կատարողական վարույթն ավարտելու մասին՝ պայմանով, որ հարկ վճարողը նախապես հատուցում է նման միջնորդության հետևանքով ծագող՝ կատարողական վճարների գծով պահանջատիրոջ ծախսերը:»:

Հոդված 3. Օրենսգրքի 437-րդ հոդվածի 4-րդ մասում ««Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» Հանրապետության» բառերը փոխարինել ««Կատարողական վարույթի մասին»» բառերով.

Հոդված 4. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2025 թվականի ~~հունվարի~~ հուլիսի 1-ից: